ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 61-2.3-52)

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

- իրականացնում է մարզի առողջապահական ոլորտի մոնիտորինգի և վերլուծության աշխատանքները.

- աջակցում է պետական առողջապահական ծրագրերի իրականացման գործընթացին և մարզային ենթակայության պետական առողջապահական կազմակերպությունների աշխատանքների իրականացմանը.

- իրականացնում է Մարզպետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների հաստիքացուցակների, ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի, վճարովի ծառայությունների ցանկի սակագների ուսումնասիրման և Բաժնի պետին ներկայացնելու աշխատանքները.

- ուսումնասիրում է Մարզի բուժհիմնարկների պետական պատվերի, ինչպես նաև վճարովի ծառայությունների դիմաց ստացված գումարների ծախսման գործընթացը և ներկայացնում է առաջարկություններ.

- իրականացնում է Մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական հիմնարկների եռամսյակային և տարեկան հաշվետվությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ներկայացնելու աշխատանքները.

- իրականացնում է մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական հիմնարկների տարեկան գործունեությունից շահաբաժինների վերաբերյալ հաշվետվությունների կազմման և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու աշխատանքները.

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2018թ. նոյեմբերի 22-ը ներառյալ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերի պատճենները իսկականի հետ միասին.

- դիմում /լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- անձնագիր

-դիպլոմ

-աշխատանքային գրքույկ կամ աշխատանքային ստաժի վերաբերյալ անհատական հաշվի քաղվածք

- արական սեռի անձինք նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ իսկականի հետ միասին

- մեկ լուսանկար 3x4 սմ. չափսի:

Աշխատավարձը կազմում է 212.309 դրամ (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ:

Տվյալ որոշակի ժամկետով թափուր պաշտոնի վերացման ժամկետը՝ հիմքի վերացումը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ,ժամը 10:00-ից մինչև 13:00-ն,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով /0232/ 35383:

Անձնակազմի կառավարման բաժնի էլեկտրոնային հասցեն՝ aragatsotn.andznakazm@ mta.gov.am